ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.01.2020թ.

Նիստին ներկա էին «ՀՖՍԿՊԻ» հիմնադրամի (ինստիտուտ) հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 17-ը:

Ապահովված էր նիստի քվորումը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Ռոման Մուրադյան հարգելի պատճառով նիստին չէր մասնակցում:

Նիստը վարում էր՝

Խորհրդի անդամ «Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական քոլեջի» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վաղինակ Գալուստյանը:

Նիստը արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Ա.Ստեփանյանը:

Օրակարգ

1. 17.01.2020 թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 1 նիստի օրակարգի հաստատում:
2. 2019թ. Եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի հաստատում:
(Զեկուցող՝ ռեկտորի ժ/պ պրոֆեսոր Դ. Խիթարյան, հարակից զեկուցող՝ ֆինանսավարչական գծով պրոռեկտոր Վ. Գևորգյանը)
3. 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:
(Զեկուցող՝ ռեկտորի ժ/պ պրոֆեսոր Դ. Խիթարյան, հարակից զեկուցող՝ ֆինանսավարչական գծով պրոռեկտոր Վ. Գևորգյանը)
4. Այլ հարցեր:

Օրակարգի հարցերի հաստատման շուրջ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի խորհրդական «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը առաջարկեց օրակարգում նշել նաև տարեկան պարտադիր ֆինանսական աուդիտի իրականացնելու գնման հայտարարության տրման հաստատման հարցը նույնպես ընդգրկել նիստի օրակարգում:

Հարցը դրվեց քվեարկության

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 17

դեմ -0

ձեռնպահ-0

Հարցն ընդունվեց:

1. **Օրակարգի առաջին հարցով** (զեկուցող ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան, հարակից զեկուցող՝ ֆինանսավարչական գծով պրոռեկտոր Վ.Գևորգյան):

Դ. Խիթարյանը հակիրճ ներկայացրեց ինստիտուտի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողական հարցերը, այնուհետև խոսքը խնդրեց

Վ. Գևորգյանը ներկայացրեց «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամ 2019թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի արդյունքները (կից նեկայացված է փաստաթուղթը):

Վ. Գևորգյանը խոսեց նաև շինարարական ծախսերի, սպորտային միջոցառումների, լավագույն ուսանողների պարգևատրումների, ուսանող-մարզիկների պարգևատրումների վերաբերյալ և նաև նախատեսվող նյուս տարվա ընթացքում պարգևատրումների պլանավորումը:

Օրակարգի առաջին հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 17

Դեմ՝0

Ձեռնպահ՝0:

Հարցն ընդունվեց:

2. **Օրակարգի երկրորդ հարցով** (զեկուցող՝ ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյանը, հարակից զեկուցող՝ ֆինանսավարչական գծով պրոռեկտոր Վ. Գևորգյան)

Դ. Խիթարյանը ներկայացրեց 2020 թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հիմնական պլանավորված աշխատանքների (անվտանգության, ջեռուցման, լուսավորության վերաբերյալ, շինարարական, վերանորոգման, ինստիտուտի 75 ամյակի կապակցությամբ կազմակերպվող միջոցառումների, լսարանների և գույքի հետ կապված) և այլ հարցեր:

2. Երկրորդ հարցի ներկայացման համար ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը խոսքը փոխանցեց ինստիտուտի ֆինանսավարչական գծով պրոռեկտոր՝ Վ.Գևորգյանին:

Վ. Գևորգյանը ներկայացրեց 2020թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (կից ներկայացված է փաստաթուղթը):

Օրակարգի երկրորդ հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Նիստում քննարկվեց նաև տարեկան պարտադիր ֆինանսական աուդիտ իրականացնելու գնման հայտարարության հարցը:

Վ. Գալուստյանը առաջարկեց քվեարկել:

կողմ՝ 17

դեմ՝ 0

ձեռնպահ՝0

Հարցն ընդունվեց:

Օրակարգի այլ հարցերում քննարկվեցին խորհրդի երկու անդամների հրաժարականի դիմում ներկայացնելու մասին և ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը տեղեկացրեց, որ հոգաբարձուների խորհրդի անդամներ՝

Գոհար Մուրադյանը նշանակվում է ինստիտուտի Որակի ապահովման բաժնի պետի ժ/պ:

Սուրեն Դանիելյանը Կիրառական մարզաձևերի ամբիոնի վարիչի ժ/պ:

Դ. Խիթարյանը նշեց նաև ուսանողական խորհրդի նոր ընտրությունների ժամանակ հարկավոր է պահպանել ֆակուլտետների հավասարակշռության սկզբունքը, ուսանողները հիշտ բաժանվեն ըստ ամբիոնների:

Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյան